ՀԱՄԱԿԱՐԳ 28.04. 2010թ.

Երեք ուղի՝ գիտությունը եւ կրթությունը զարգացնելու համար

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպել է ՀՀ ԳԱԱ նախագահության անդամների հետ

Նախագահ **Սերժ Սարգսյանն** ընդունել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության անդամներին եւ Ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտների ղեկավարներին:

Նախագահ Սարգսյանն ասել է, որ անհրաժեշտ է համարում Ակադեմիայի վերջերս անցկացված տարեկան ընդհանուր ժողովից հետո գիտնականների հետ քննարկել գիտության զարգացմանը խոչընդոտող խնդիրները եւ դրանց հնարավոր լուծումները: *«Այս թեմայով մինչ այժմ եղած քննարկումները նախանշում են ճիշտ ճանապարհը. կարծում եմ մեր առաջնահերթ խնդիրը գիտությունը կրթության եւ տնտեսության հետ սերտ շաղկապելն է»*,- ասել է երկրի ղեկավարը:

Սերժ Սարգսյանը խոսել է մեր երկրում գիտությունը եւ կրթությունը զարգացնելու երեք առանցքային ուղիների մասին. *«Առաջին ճանապարհը, որով մենք պետք է շարժվենք, առկա ուսումնական եւ գիտական հաստատությունների վերակազմավորումն եւ ավելի արդյունավետ օգտագործումն է, այսինքն բարեփոխումների շարունակականության ապահովումը: Երկրորդ ճանապարհը նոր տիպի ուսումնական եւ գիտական հաստատությունների ստեղծումն է, ինչպիսին, օրինակ հիմնադրեցինք Տավուշում ժամանակակից ինտերնատ - դպրոց, որտեղ ուսուցումը լինելու է օտար լեզվով եւ կիրառվելու են ուսման բնագավառում ամենաժամանակակից ձեռքբերումները:*

Երրորդ ճանապարհը մեր ուսանողներին եւ երիտասարդ գիտնականներին աշխարհի լավագույն ուսումնական ու գիտական հաստատություններում կրթվելու, փորձ ձեռք բերելու հնարավորություն ընձեռելն է»,- նշել է երկրի ղեկավարը:

Նախագահ Սարգսյանը տեղեկացրել է, որ այս տարի բազմապատկվելու են հայաստանցի ուսանողների ուսումն արտերկրյա առաջատար բուհերում ֆինանսավորող *«Լույս»* հիմնադրամի միջոցները, որպեսզի ավելի մեծ թվով երիտասարդներ կարողանան ուսանել արտերկրում: Սերժ Սարգսյանը ընդգծել է նաեւ երիտասարդ գիտնականների համար արտերկրում վերապատրաստվելու հնարավորություն ստեղծելու անհրաժեշտությունը՝ ասելով, որ այդ ուղղությամբ եւս պետք է քայլեր ձեռնարկվեն: Հանրապետության նախագահը խոսել է նաեւ պետության պատրաստակամության մասին՝ լուծելու երիտասարդ գիտնականների սոցիալական որոշ խնդիրներ. *«Գիտեմ, որ երիտասարդ գիտնականներին բնակարաններով ապահովելու խնդիր կա, եւ մենք պատրաստ ենք շատ լուրջ ներդրում կատարել այս գործում: Սակայն այդ աջակցությունը պետք է ստանան միայն ու միայն այն երիտասարդ գիտնականները, ովքեր գիտության մեջ իսկապես խորանալու մտադրություն ունեն, ոչ թե նրանք, ովքեր ասպիրանտուրան ավարտելուց հետո մի քանի ամիս ինչ-որ գիտական հաստատությունում աշխատում են եւ հետո գնում այլ ուղղությամբ»*,- ասել է նախագահ Սարգսյանը:

Ակադեմիկոսները երկրի ղեկավարի հետ զրուցել են գիտության զարգացումը խոչընդոտող մի շարք խնդիրների մասին: Դրանցից առաջնահերթ է համարվել այն, որ ակադեմիան համապատասխան փորձակոնստրուկտորական ենթակառուցվածքների բացակայության պատճառով չի կարողանում իր գիտական արդյունքները լիարժեք ներդնել տնտեսությունում: Նրանց խոսքով նման կառուցվածքի բացակայությունը նաեւ անհնար է դարձնում մասնավոր կապիտալի հոսքը դեպի գիտություն, ինչը նոր հետազոտություններ կատարելու եւ գիտական արդյունք ձեւավորելու գործում էական նշանակություն ունի: Խոսվել է նաեւ ԳԱԱ-ի ճյուղային ինստիտուտների եւ տնտեսության համապատասխան ճյուղերի միջեւ համագործակցության գործուն մեխանիզմներ ստեղծելու ուղիների մասին:

Զրուցակիցներն անդրադարձել են հասարակագիտական գիտությունների, մասնավորապես, հայագիտության զարգացումը խթանող պայմանների ստեղծման անհրաժեշտությանը: ՀՀ նախագահը նշել է, որ խրախուսիչ պայմաններ պետք է ստեղծել նաեւ հայագիտությամբ զբաղվող արտերկրի գիտնականների համար: Խոսվել է նաեւ հայ գիտնականների աշխատությունները օտար լեզուներով լույս ընծայելու, դրանք նաեւ էլեկտրոնային ռեսուրսներում ներկայացնելու գործընթացի կազմակերպման մասին:

Գիտության զարգացման խնդիրներից բացի, ակադեմիկոսներն անդրադարձել են նաեւ այս օրերին ակտիվորեն քննարկվող Հայաստան – Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը: Նրանք ասել են, որ սատարում են ՀՀ նախագահին այս գործընթացում եւ նրա ձեռնարկած քայլերը համարում արդյունավետ:

Գիտնականները նախագահ Սարգսյանին նաեւ առաջարկել են նման հանդիպումները դարձնել ավանդական՝ ասելով, որ ծավալված քննարկումը ցույց տվեց, որ դրանք կարող են շատ օգտակար լինել:

Երկրի ղեկավարը հավանություն է տվել գիտնականների առաջարկին եւ շնորհակալություն հայտնել անկեղծ ու շահագրգիռ զրույցի համար նշելով, որ այն հնարավորություն տվեց ոչ միայն արձանագրել խնդիրները, այլեւ նախանշել դրանց լուծման կոնկրետ ուղիներ:

ՀՀ նախագահի մամլո գրասենյակ